https://doi.org/10.46991/hc.2022.17.1.007

Էդգար Վարշամյան
ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի ասպիրանտ

ՀԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐ ԱՐՇԱԿ Բ-Ի ՆԵՐՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հիմնաբառեր. Արշակ Բ, Ներսես կաթողիկոս, Գնել, Տիրիթ, ներքին քաղաքականություն, Արշակավան, նախարար, եկեղեցի, Հայր մարդպետ։

Արշակ Բ-ի վարած ներքին քաղաքականությունը հայոց պատմության ամենաուսանելի էջերից է: Իր գահակալության հենց սկզբից հայոց թագավորը հետևում էր մի գաղափարի՝ պետության հզորացմանը, ինչին էլ միտված էր ներքին քաղաքականության մեջ նրա յուրաքանչյուր քայլը:

Իր գահակալության սկզբնական շրջանում տարածաշրջանում հաստատված ժամանակավոր անդորրը հնարավորություն ընձեռեց Արշակ Բ-ին էապես ամրապնդելու իր դիրքերը երկրի ներսում: Առաջին հերթին հայոց թագավորը սկսեց աստիճանաբար արքունիք վերադարձնել իրենց տիրույթներ հեռացած նախարարներին, սահմանապահներ կարգեց երկրի բոլոր կողմերում, հզորացրեց բանակը և հաջողությամբ հանգուցալուծեց գահի համար մղվող պայքարը:

Իր գահակալության երկրորդ փուլում հայոց թագավորին հաջողվեց համառ պայքար մղել տնտեսապես հզորացած նախարարների ու եկեղեցու դեմ: Նախնառաջ Արշակ Բ-ն կառուցեց Արշակավան քաղաքը՝ թույլատրելով այնտեղ բնակվել նախարարներից և եկեղեցուց դժգոհ տարրերին: Թագավորից դժգոհ նախարարները հարձակվեցին քաղաքի վրա, ավերեցին այն և կոտորեցին բնակչությանը: Այնուհետև պատերազմ ծագեց թագավորի ու նախարարների միջև, սակայն կողմերից որևէ մեկը հաջողություն չունեցավ: Արշակ Բ-ի և նախարարների խնդրանքով Ներսես կաթողիկոսը հաշտեցրեց նրանց: Սակայն Արշակավանի դեպքերից շատ ժամանակ չանցած՝ Արշակ Բ-ն հարձակման անցավ նախարարների դեմ՝ ի չիք դարձնելով կայացած համաձայնությունը: Առաջիններից մեկը պատժվեց Կամսարականների ընտանիքը: Երկրի ներքին միասնականության վերականգնման համար Արշակ Բ-ն Ներսեսին զրկեց կաթողիկոսական աթոռից՝ նոր կաթողիկոս կարգելով իր հավատարիմ հոգևորականներից Չունակ անունով մեկին:

Edgar Varshamyan
PhD student at the Chair of Armenian History of YSU

THE INTERNAL POLICY OF ARMENIAN KING ARSHAK II

Keywords: Arshak II, Catholicos Nerses, Gnel, Tirit, domestic policy, Arshakavan, minister, church, Hayr mardpet.

To summarize, we can state that Arshak II's domestic policy is one of the most educational chapters in the Armenian history. From the very beginning of his reign, the Armenian king pursued the idea of strengthening of the state, and his every action in domestic politics was aimed at it.

Owing to the temporary lull in the region at the start of his reign, Arshak II was able to greatly consolidate his position inside the country (kingdom). First and foremost, the Armenian king began to return the ministers who had left their domains to the court, appoint border guards in all regions of the kingdom, strengthen the army, and effectively finish the battle for the throne.

During the second phase of his reign, the Armenian king was able to maintain a consistent battle against the economically powerful ministers and the church. Firstly, Arshak II established the city of Arshakavan, enabling those displeased with the lords and the church to reside there. Dissatisfied with the king, the ministers attacked the city, destroying it and slaughtering the inhabitants. Then a war erupted amongst the king and the lords, but neither side was victorious. Catholicos Nerses reconciled them at the request of Arshak II and the lords. Not long after the events at Arshakavan, however, Arshak II assaulted the lords, thereby nullifying the agreement. The Kamsarakans were among the first to be punished. To restore the country's internal unity, Arshak II dismissed Nerses from the position of Catholicos and nominated one of his faithful clergymen, Chunak, as the new Catholicos.

Эдгар Варшамян
Аспирант кафедры истории Армении ЕГУ

ВНУТРЕННЯЯ ПОЛИТИКА АРМЯНСКОГО ЦАРЯ АРШАКА II

Ключевые слова: Аршак II, католикос Нерсес, Гнел, Тирит, внутренняя политика, Аршакаван, министр, церковь, Айр мардпет.

Подводя итоги, можно констатировать, что проводимая Аршаком II внутренняя политика является одной из самых поучительных страниц истории Армении. Армянский царь с самого начала своего правления преследовал идею укрепления государства, на что был направлен каждый его шаг во внутренней политике.

Временное затишье в регионе в начале его правления позволило Аршаку II значительно укрепить свои позиции внутри страны. Прежде всего, армянский царь стал постепенно возвращать ко двору князей, покинувших свои владения, расставил пограничные стражи во всех частях страны, усилил войско и успешно завершил борьбу за престол.

Во второй фазе своего правления армянскому царю удалось вести упорную борьбу с церковью и экономически укрепившимися князьями. Прежде всего, Аршак II построил город Аршакаван, позволив там жить элементам, недовольным князьями и церковью. Недовольные царем князья напали на город, разрушили его и вырезали население. Затем началась война между «министрами» и царем , но ни одна из сторон не добилась успеха. По просьбе князей и Аршака II католикос Нерсес примирил их. Однако вскоре после событий в Аршакаване Аршак II напал на князей, аннулировав соглашение. Семья Камсараканов была наказана одной из первых. Для восстановления внутреннего единства страны Аршаком II Нерсес был низложен из католикосата, а новым католикосом был назначен один из его верных священнослужителей, Чунак.

* * *

Մուտք: Մեծ Հայքի Արշակունյաց թագավորության քաղաքական պատմության մեջ առանցքային դեր ունի հայոց թագավոր Արշակ Բ-ն (350-368)։ Նրա գահակալության շրջանը պարունակում է իրադարձություններ, որոնք հենքային նշանակություն ունեցան հայոց թագավորության հետագա գոյության համար։ Արշակ Բ-ի դարաշրջանը ցայսօր ամբողջական ու խորքային ուսումնասիրության կարոտ է մնում, և առաջանում է անհրաժեշտություն՝ հավուր պատշաճի գնահատելու հայոց թագավորի վարած ներքին քաղաքականությունը։ Այդ քաղաքականության փաստական տեղեկությունները մեզ հայտնի են գլխավորապես Փավստոս Բուզանդի, Մովսես Խորենացու պատմություններից։ Ասվածի համատեքստում քննարկելի են հայոց թագավորի ներքին քաղաքականության վերաբերյալ պատմիչների հաղորդած տեղեկությունների ու հետազոտողների կողմից առաջ քաշած տեսակետների համաբերումը՝ հիմնական թիրախ ունենալով ներքին քաղաքական անցուդարձերը։ Աշխատանքի գիտական նորույթն այն է, որ սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկությունների միջոցով քննվել են Արշակ Բ-ի ներքին քաղաքականությունը, նախարարների և եկեղեցու հետ նրա հարաբերությունները։ Ցույց է տրվել, որ ավատատիրական հարաբերությունների պայմաններում, երբ երկրում առկա էին կենտրոնախույս դրսևորումները, հայոց թագավորի համար գերխնդիր էր կենտրոնաձիգ պետության ստեղծումը։

Արդի գիտական գրականության մեջ հիմնախնդրին այս կամ այն չափով անդրադարձել են Ա. Գարագաշյանը, Հ. Մանանդյանը, Ե. Մուրադյանը, Հ. Աստուրյանը, Լեոն, Յ. Մարկվարտը, Հ. Հարությունյանը, Բ. Հարությունյանը և այլք։ Աշխատանքը շարադրված է փաստերի համադիր քննությամբ, պատմահամեմատական վերլուծության մեթոդների կիրառմամբ։

Արշակ Բ-ի սկզբնական քայլերն երկիրն ամրապնդելու համար: 340-ական թթ. երկրորդ կեսին արտաքին քաղաքական միջավայրում տեղի ունեցած իրադարձությունները որոշակիորեն փոխեցին ուժերի հավասարակշռությունը տարածաշրջանում։ Այդ իրադարձությունների կուլիմինացիոն կետը 350 թ. պարսկա-հռոմեական

համաձայնությունն էր, ըստ որի՝ ռազմական գործողությունները ժամանակավորապես դադարեցվեցին, պարսկական գերությունից վերադարձավ կուրացված Տիրան թագավորը (339-350), որը, ի վիճակի չլինելով կառավարել երկիրը, հաստատվեց Արագած լեռան ստորոտում գտնվող Կուաշ ավանում: 350 թ. Շապուհ Բ-ն Մեծ Հայքում թագադրեց Արշակ Բ-ին: Նրա գահակալության սկզբնական շրջանում Մեծ Հայքում տիրում էր ներքին քաղաքական խառնակ իրադրություն: Մասնավորապես, Տիրանը հեռացել էր պետական գործերից, Արշակ Բ-ի եղբայրների որդիները՝ Գնելն ու Տիրիթը, գտնվում էին պատանդության մեջ հռոմեական արքունիքում, դեռևս Տիրանի գահակալության վերջին շրջանում հռոմեա-պարսկական հակամարտության պատճառով մի շարք նախարարներ հեռացել էին կենտրոնական արքունիքից: Անհրաժեշտ էին կտրուկ քայլեր պետության ներքին միասնականության վերականգնման համար: Բնականաբար, այդ ճանապարհին հայոց թագավորը գնաց որոշակի զիջումների, քանի որ նախարարներին կրկին արքունիքի շուրջ համախմբելու համար անհրաժեշտ էր նրանց շնորհել որոշ պետական պաշտոններ:

350-ական թթ. առաջին կեսին տարածաշրջանում հաստատված ժամանակավոր անդորրը հնարավորություն ընձեռեց Արշակ Բ-ին էապես ամրապնդելու իր դիրքերը երկրի ներսում: Առաջին հերթին հայոց թագավորը սկսեց աստիճանաբար արքունիք վերադարձնել իրենց տիրույթներ հեռացած նախարարներին: Արշակն արքունիք վերադարձրեց Մամիկոնյաններին, որոնցից ավագը՝ Վարդանը, կարգվեց տոհմի նահապետ, միջնեկ եղբայր Վասակը, որն Արշակի դայակն էր եղել՝ հայոց սպարապետ, իսկ կրտսերը՝ Վահանը՝ զորապետ: Հայոց թագավորն իրեն մերձեցրեց մյուս մեծամեծ նահապետներին և նրանցից յուրաքանչյուրի զորաբանակը թագավորության տարբեր կողմերում կարգեց որպես սահմանապահներ: Ըստ Փավստոս Բուզանդի՝ այս ամենի շնորհիվ «նորոգեցաւ զուարթացաւ տէրութիւնն թագաւորութեանն Հայաստան երկրին որպէս և զառաջինսն. մեծամեծքն յիւրաքանչիւր գահու, և գործակալքն յիւրաքանչիւր չափու» (Փավստոս Բուզանդ, 1987, 106): Հայոց հազարապետ նշանակվեց «շինականաշէն ազգն Գնունեաց», և նախարարական մյուս տներից նա նշանակեց գործակալներ, որոնք «բարձիւք առաջի արքային պատիւ ի գլուխ բազմէին» (Փավստոս Բուզանդ, 1987, 106): Մեծամեծ նահապետներից ու տանուտերերից զատ՝ արքունիքում պալատական հանդեսների ժամանակ բարձ էին զբաղեցնում գործակալությունների թվով 900 պաշտոնյաներ ու սպասավորներ՝ չհաշված ոտքի վրա կանգնած սպասավորներին (Փավստոս Բուզանդ, 1987, 106): Պետության ներքաղաքական կյանքի կայունացման, կենտրոնացած պետության ամրապնդման, բանակի հզորացման և երկրի սահմանների ամրացման տեսանկյունից սա հույժ կարևոր քայլ էր Արշակ Բ-ի կողմից: Այդուհանդերձ, իր կառավարման սկզբում նախարարներին պաշտոններ տալը խոշոր զիջում էր թագավորի կողմից: Սակայն կարծում ենք, որ դա ավելի շատ սիրաշահելու քաղաքականություն էր, որի նպատակն էր ամրապնդել պետությունը:

Պետականության ամրապնդման տեսանկյունից իրականացվեց հաջորդ կարևոր քայլը: Իր գահակալության երրորդ տարում՝ 353 թ., Արշակ Բ-ն որոշեց կաթողիկոսական աթոռ բարձրացնել իր սիրելի սենեկապետ, զինվորական պաշտոնյա Ներսեսին, որը Հուսիկ կաթողիկոսի թոռն էր ու Աթանագինեսի որդին (Մովսես Խորենացի, 1981, 334): Թագավորի կարգադրությամբ Փավստոս եպիսկոպոսը նրան սարկավագ ձեռնադրեց: Դրանից հետո

Արշակը Ներսեսին մի շարք մեծամեծ նախարարների ուղեկցությամբ ուղարկեց Կեսարիա, որտեղ մեծ եպիսկոպոսապետ Եվսեբիոսը նրան ձեռնադրեց Մեծ Հայքի կաթողիկոս: Երբ Ներսես կաթողիկոսը և նրա ուղեկիցները հասան Մեծ Հայք, Արշակը նրանց դիմավորեց Դարանաղյաց գավառի Առյուծ լեռան մոտ: Փավստոս Բուզանդի խոսքերով Ներսեսը վերադառնալուց հետո վերականգնեց ավերված եկեղեցիները, կանգնեցրեց կործանյալ սեղանները և ամենուրեք տարածեց Աստծո խոսքը (Փավստոս Բուզանդ, 1987, 112-116): Ինչպես հավաստում է Մովսես Խորենացին, «զամենայն կարգս ուղղութեան հարցն իւրոյ նորոգեաց, այլ և առաւել ևս. քանզի զբարեկարգութիւնն զոր ետես ի Յունաց աշխարհին, մանաւանդ ի թագաւորեալ քաղաքին, ի սմա նկարագրէ» (Մովսես Խորենացի, 1981, 334): Կարող ենք ամրագրել, որ Արշակ Բ-ն, բազմելով հայոց գահին, իր թագավորության սկզբնական շրջանում երկրորդ կարևոր քայլը իրականացրեց. հայոց կաթողիկոսի թեկնածու կարգեց իր սիրելի սենեկապետ Ներսեսին՝ դրանով իսկ նպատակ հետապնդելով իր հսկողության տակ պահելու երկրի հոգևոր ու քաղաքական իշխանությունը: Սրանք պետականության ամրապնդման ու արքունիքի շուրջ համախմբան տեսանկյունից էական քայլեր էին: Հ. Մանանդյանն իրավամբ նշում է, որ այս քայլերի շնորհիվ Ներսես կաթողիկոսն ու Վասակ Մամիկոնյանը դարձել էին հայոց թագավորի գլխավոր կողմնակիցները (Մանանդյան, 1978, 163):

Եռանդուն գործունեություն ծավալած Ներսեսը Տարոնի Աշտիշատ գյուղում 353 թ. հրավիրեց եկեղեցական ժողով, որին, ըստ Փավստոս Բուզանդի, մասնակցեցին երկրի բոլոր եպիսկոպոսները: Պատմիչի հաղորդմամբ Աշտիշատում էր կառուցվել երկրի առաջին եկեղեցին, և «զի նա էր մայր եկեղեցեացն, և ի տեղի լեալ նախնեացն ժողովոց սիւնհոդոսին» (Փավստոս Բուզանդ, 1987, 118): Բ. Հարությունյանը նշում է, որ չնայած հայոց եկեղեցու ժողովների վերաբերյալ մեր տեղեկությունները սկսվում են Աշտիշատի ժողովով, այսուհանդերձ սույն վկայությունն իրավունք է տալիս եզրակացնելու, որ մինչ այդ էլ նման ժողովներ հրավիրվել են (Հայոց պատմություն, ԳԱԱ հրատ., հ. Բ, գք. Ա, 2018, 72): Աշտիշատի ժողովն ընդունեց կանոնական որոշումներ, որոնք վերաբերում էին ոչ միայն կրոնական-եկեղեցական խնդիրներին, այլև աշխարհիկ կյանքին ու հասարակական-տնտեսական հարաբերություններին: Ժողովը որոշեց «յամենայն աշխարհս և ’ի գաւառս և ’ի կողմանս կողմանս, ’ի կոյս կոյս, ’ի խորշս խորշս սահմանացն Հայոց. յայտ արարեալ զպատեհ պատեհ տեղիսն զատուցանել, շինել աղքատանոցս, և ի՛ ժողովել զախտաժէտս և զօրկունս և զմարմնավարս և զամենայն ցաւոտս. և նոցուն կարգեցին օրկանոցս և դարմանոց և ռոճիկս, և պատանս աղքատաց: Զի այսպէտ ետ հրաման մեծ եպիսկոպոսապետն Ներսէս, և սոյն կամ եղև ամենայն սուրբ ժողովոյն, զի այնպիսիքն միայն նստեալ լիցին յիւրաքանչիւր կայեանս, և մի՛ ելանել ’ի մուրոյն տառապանս, և մի՛ բնաւ ելանել ըստ յիւրաքանչիւր դուրս, այլ զի ամենայն ոք պարտապան է նոցա: Հարկ իսկ է զի մի՛ կարգ աշխարհի, ասէ, եղծցի. այլ արժանի է զի ամենեքեան առ հասարակ ողորմածութեամբ և երկիւղիւ տարեալ նոցա զդարմանսն, և զպիտոյս նոցա վճարեսցեն» (Փավստոս Բուզանդ, 1987, 118-120):

Աշտիշատի եկեղեցական ժողովի վերաբերյալ մանրամասները մեզ գլխավորապես հայտնի են Փավստոս Բուզանդի պատմությունից: Դատելով պատմիչի հաղորդած տեղեկություններից՝ ժողովը սահմանեց, որ չի կարելի մեռածի վրա հեթանոսական

սովորությամբ լացուկոծ անել: Ժողովը հորդորեց, որ զույգերն ամուսնության մեջ օրինավոր լինեն, իրար չխաբեն, չդավեն, հեռու մնան մերձավոր խառն ամուսնություններից: Ժողովը թագավորին, մեծամեծերին և բոլոր իշխանավորներին հորդորում էր գթալ իրենց ծառաներին, ստորադրյալներին ու աշակերտներին, սիրել իբրև իրենց հարազատների, ապօրինի ծանր հարկերով չճնշել: Մյուս կողմից էլ ժողովը ծառաներին պատվիրում էր հավատարիմ ու հնազանդ լինել իրենց տերերին՝ հուսադրելով, թե դրա համար Տիրոջից վարձք կստանան: Ըստ Փավստոս Բուզանդի՝ Աստվածաշնչի հունարեն կամ ասորերեն քարոզի ու հոգևորականության մի զգալի մասի հայ չլինելու պատճառով քրիստոնեությունը ժողովրդի շրջանում լայն տարածում չէր գտնում: Դրանից ելնելով՝ ժողովը որոշեց Մեծ Հայքի բոլոր գավառներում հունարեն ու ասորերեն ուսուցանող դպրոցներ հիմնել՝ եկեղեցու սպասավորներ պատրաստելու համար (Փավստոս Բուզանդ, 1987, 120-122, Մովսիսեան 1884, 44-45): Պատմիչի հաղորդմամբ Ներսեսը «զվերակացութիւնս աշխարհի ամենայն հոգաբարձութեամբ, առանց ամենայն ծուլութեան և ամենայն յապաղութեան, տանէր մինչև ի վախջան իւր, և ոչ երբէք ուրեք նմա, եղև նման նմա այլ ոք ի Հայաստան երկրին» (Փավստոս Բուզանդ, 1987, 126):

Աշտիշատի ժողովի կանոնական որոշումները տեղ չեն գտել «Կանոնագիրք Հայոց»-ի մեջ (Կանոնագիրք Հայոց, հ. Ա, 1964), սակայն, ինչպես տեսնում ենք, դրանք պահպանվել են Փավստոս Բուզանդի երկում: Այս ժողովի մասին հավանաբար անուղղակի վկայություններ է պահպանել նաև Մովսես Խորենացին: Ճիշտ է, նա չի հիշատակում *Աշտիշատ* անունը, սակայն կարող ենք ենթադրել, որ նա ծանոթ է Փավստոսի սույն տեղեկությանը: Համաձայն Պատմահոր տեղեկությունների՝ «ժողով արարեալ եպիսկոպոսաց և համօրէն աշխարհականօք, կանոնական սահմանադրութեամբ հաստատեաց զողորմածութիւն, խլելով և զանգթութեանն արմատ, որ բնաբար սովորութեամբ էր յերկրիս մերում» (Մովսես Խորենացի, 1981, 336): Ըստ Մովսես Խորենացու՝ աղքատանոցների վրա բաշխվեցին ավաններ, ագարակներ ու արգասաբեր անդաստաններ, որոնցից ստացված եկամուտներով պետք է հոգային դրանց ծախքերը: Այդ գործերի կազմակերպումը հանձնարարվեց կաթողիկոսի սարկավագ Խադին, որը Կարնո գավառի Մարդք գյուղից էր: Պատմահայրը հավաստում է, որ ժողովը որոշել էր օտարականների համար բոլոր գյուղերում կառուցել իջևաններ, որբերի ու ծերերի համար կերակրման տեղեր, չքավորներին խնամելու, անապատ ու անմարդաբնակ վայրերում եղբայրանոցներ ու մենաստաններ, իսկ մենակյացների համար խրճիթներ, որոնց վրա վերահսկիչներ նշանակվեցին Շաղիտան, Եպիփանը, Եփրեմը, Գինդ Սլկունին և ուրիշներ (Մովսես Խորենացի, 1981, 336, Պետրոսյան, 1995, 47-48): Փավստոս Բուզանդն Աշտիշատի ժողովի ընդունած որոշումները, որպես կանոն, առանձնապես վերագրում է Ներսես կաթողիկոսին, որը, անկասկած, առանցքային դեր ունեցավ դրանում: Սակայն չնայած աղբյուրների լռությանը՝ կարծում ենք, որ Աշտիշատի կանոնական որոշումների բովանդակության վրա ազդեցություն է ունեցել նաև Արշակ Բ-ն: Այս իմաստով, մեր կարծիքով, Աշտիշատի եկեղեցական ժողովի որոշումները առանցքային դեր ունեցան Մեծ Հայքի կրոնական-եկեղեցական, սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական կյանքում: Մովսես Խորենացին գրում է. «Եւ էր այնուհետև տեսանել զաշխարհս մեր ոչ որպէս զբարբարոսս այլանդակեալս, այլ իբրեւ զքաղաքացիս համեստացեալս» (Մովսես Խորենացի, 1981, 336): Կարծում ենք, որ Աշտիշատի

եկեղեցական ժողովի որոշումները ժամանակաշրջանի առումով շրջադարձային իրողություն էին, քանի որ դրանք, առաջին հերթին, հասարակության մի հատվածի (պետական և եկեղեցական բարձրաստիճան այրեր, նախարարներ) կամքը պարտադրում էին մյուսին՝ առանց երկրորդի (գյուղացիներ, շինականներ, արհեստավորներ, չքավորներ և այլն) կարծիքը հաշվի առնելու:

Որոշ ժամանակ անց ներքաղաքական պայքարը Մեծ Հայքում կրկին սրվեց: Հռոմեական գերությունից վերադառնալով Մեծ Հայք՝ Արշակի եղբորորդի Գնելը հաստատվեց Արագածի փեշերին ընկած Կուաշ ավանում՝ իր պապ Տիրանի մոտ: Վերջինս նրան տվեց իր ամբողջ ունեցվածքը, ներառյալ գյուղերն ու դաստակերտները, և կարգադրեց բնակվել Կուաշում: Գնելը կնության առավ Անդովկ Սյունու դուստր Փառանձեմին, շքեղ, թագավորավայել հարսանիք արեց՝ առատ պարգևներ տալով բոլոր նախարարներին, «որոց հաճեալ ընդ նա և սիրեալ՝ ետու առ նա զզաւակս իւրեանց. զորս առեալ, մեծապէս հանդերձեաց զինու և զարդու. և յաւելին ևս սիրել զնա» (Մովսես Խորենացի, 1981, 340): Հավանաբար կարող ենք ենթադրել, որ Արտաշեսի ու Տրդատի որդիներին Մեծ Հայք ուղարկելով՝ հռոմեական կայսրը հայոց գահի թեկնածուի հարցում շեշտը դրել էր ոչ թե օրինական թագաժառանգ Տիրիթի, այլ Գնելի վրա, որը, գահ բարձրանալով, ստիպված կլիներ ավելի շատ կախված մնալ կայսրությունից: Վերնոշյալի հետ կապված՝ իր տեսակետն է հայտնել Բ. Հարությունյանը, ըստ որի՝ պարզվում է, որ Գնելն արդեն սկսել էր նախարարների շրջանում այդ ուղղությամբ աշխատանքներ տանել և անգամ իր մոտ ծառայության էր վերցրել նրանց զավակներին, ինչը թագավորի բացառիկ մենաշնորհն էր: Դա նկատում ու հասկանում էին թե՛ Արշակը և թե՛ Տիրիթը: Արշակն էլ գիտակցում էր, որ եթե հռոմեացիների կամակատարը չդառնա, ապա վերջիններս ամեն ինչ կանեն իրեն գահընկեց անելու և Գնելին կամ Տիրիթին հայոց գահ բարձրացնելու համար (Հայոց պատմություն, ԳԱԱ հրատ., հ. Բ, գք. Ա, 2018, 79):

Տիրիթը, որն առաջնահերթ էր համարում Գնելից ազատվելը, թագավորին ներկայացավ իր բարեկամ Վարդան Մամիկոնյանի հետ և հայտնեց. «Ո՞չ գիտես, զի խորհեալ է Գնելոյ սպանանել զքեզ, զի ինքն փոխանակ քո թագաւորեսցէ: Ահա տե՛ս, արքայ, զնշան իրին, զի բնակեցաւ Գնէլ յԱյրարատ, ի կալուածս ձեր թագաւորաց, և սիրտ նախարարացն եղև ընդ նմա: Քանզի կայսերին նիւթելով զայդ՝ ետուն նմա զպատիւ հիւպատոսութեանդ, և զանձս սաստիկս որով պատրեաց զնախարարսն» (Մովսես Խորենացի, 1981, 340): Դատելով պատմիչի հաղորդած տեղեկություններից՝ կարող ենք ամրագրել, որ ամենայն հավանականությամբ Տիրիթը Գնելին վնասելու համար նրա հասցեին հնչեցրեց ամենածանր մեղադրանքը՝ Այրարատում հաստատվելը, ինչպես նաև կայսրի կողմից հյուպատոսության աստիճան ստանալով՝ նախարարներին իր կողմը գրավելը, ինչը Արշակ Բ-ն չէր կարող հանդուժել: Բ. Հարությունյանը նշում է, որ Արշակ Բ-ի կողմից Տիրիթին նման մեղադրանք չներկայացնելը ցույց է տալիս, որ նա այդ ժամանակ դեռևս համարվում էր օրինական թագաժառանգ (Հայոց պատմություն, ԳԱԱ հրատ., հ. Բ, գք. Ա, 2018, 79): Ըստ Մովսես Խորենացու՝ Վարդան Մամիկոնյանն էլ իր հերթին հայտարարում է, թե «իմովք ականջօք լուայ ի Գնելոյ, զի ասէր, թե ոչ թողում հօրեղբոր իմում զվրէժ մահուան հոր իմոյ, որ վասն դորա եղև» (Մովսես Խորենացի, 1981, 340): Եթե հավատալու լինենք պատմիչի այս հաղորդմանը, ըստ որի՝ Գնելը մեղադրել է Արշակին իր

հոր սպանության համար, ապա սա ևս մի կարևոր հանգամանք էր, որ Արշակ Բ-ն իր զայրույթը թափի Գնելի վրա: Այս բոլորի հետ միասին կարևոր հանգամանք ևս. հայոց թագավորին հավանաբար կարող էր անհանգստացնել Գնելի ամուսնությունն Անդովկ Սյունու դստեր հետ, ինչը քաղաքական տեսանկյունից կարող էր վտանգավոր լինել Արշակի համար, քանի որ Գնելի գահ բարձրանալու հարցում երկրի ուժեղ նախարարական տներից մեկը կաջակցեր նրան:

Երբ Տիրիթն ու Վարդան Մամիկոնյանը մեղադրանքը ներկայացրին, թագավորն անմիջապես օգտվեց առիթից և Մամիկոնյան նախարարին Գնելի մոտ ուղարկեց հետևյալ պահանջով. «Ընդէ՞ր բնակեցար յԱյրարատ և լուծեր զկարգ հայրենեաց: Քանզի սովորութիւն էր՝ արքայի միայն բնակել յԱյրարատ և միոյ որդւոյ նորա զոր փոխանորդ թագաւորի պահէին, և այլոց Արշակունեաց բնակել ի գաւառս Հաշտենից և Աղիովտի և Աղբերանւոյ, հանդերձ ռոճկօք և մտիւք յարքունուստ: Եւ արդ՝ ընտրելի է քեզ, կամ ընդունել զմահ, կամ գնալ յԱյրարատայ, և արձակել ի քէն զուստերս նախարարացդ» (Մովսես Խորենացի, 1981, 340): Պատմիչի հաղորդումները ցույց են տալիս, որ Այրարատում կարող էին հաստատվել միայ թագավորն ու թագաժառանգը, և դա նրանց մենաշնորհն էր, իսկ Արշակունյաց տոհմի մյուս անդամները հաստատված էին Հաշտյանք, Աղիովիտ ու Առբերանի գավառներում: Ուստի Գնելը կատարեց թագավորի հրամանը՝ գնալով Աղիովիտ ու Առբերանի: Ըստ Պատմահոր տեղեկության՝ գործին խառնվեց Տիրանը, որին խիստ զայրացրել էր Գնելին Այրարատից վտարելու հրամանը: Հավանաբար Արշակ Բ-ն հորը ևս կասկածեց դավադրության մեջ և իր սենեկապետին ուղարկեց Կուաշ ավան, որոնք Տիրանին խեղդամահ արեցին: Տիրանը հուղարկավորվեց Կուաշ՝ արժանի չհամարվելով իր նախորդների պես թաղվելու Անիի արքունական հանգստարանում (Մովսես Խորենացի, 1981, 340):

Փավստոս Բուզանդը Տիրիթի կողմից Գնելին ամբաստանելը բացատրում է դեպի Փառանձեմն ունեցած սիրով (Փավստոս Բուզանդ, 1987, 182): Տիրիթը և նրա բարեկամները, մասնավորապես Վարդան Մամիկոնյանը, աշխատում էին ամեն հարմար առիթով վարկաբեկել Գնելին թագավորի աչքում: Արդյունքում թագավորը, տեղի տալով Գնելի հասցեին հնչեցված ամբաստանություններին, Շահապիվանում գտնվող արքունական բանակում հրամայեց գլխատել նրան (Փավստոս Բուզանդ, 1987, 186-188):

Ըստ Փավստոսի՝ Գնելի հուղարկավորությունից հետո Տիրիթը պատգամավոր ուղարկեց թագավորի մոտ՝ ստանալու նրա՝ Փառանձեմի հետ ամուսնանալու համաձայնությունը: Սակայն Արշակը հայտարարեց, թե իր լսածները ճիշտ են, որ «վասն կնոջ իւրոյ եղև մահն Գնելոյ» (Փավստոս Բուզանդ, 1987, 192): Ըստ Բուզանդի՝ իբր դրան հետևեց Տիրիթի փախուստը, բայց բանակի ազատները թագավորի հրամանով նրան հասան Բասեն գավառում և սպանեցին: Արշակ Բ-ն դրանից հետո ամուսնացավ Փառանձեմի հետ, որից ծնվեց Պապը (Փավստոս Բուզանդ, 1987, 192): Հայոց թագավորի՝ Փառանձեմի հետ ամուսնանալու դեպքի հետ կապված՝ կարող ենք արձանագրել հետևյալը. այս իրողությունը Արշակ Բ-ի կողմից ճկուն քայլ էր՝ Անդովկ Սյունուն իրեն հավատարիմ դարձնելու ու արքունիքի շուրջ հզոր նախարարական տներից մեկին համախմբելու համար: Կարող ենք ենթադրել, որ այդ քայլով հայոց թագավորը հնարավորինս չեզոքացրեց Անդովկ Սյունու և, հնարավոր է, նաև այլ նախարարական տների թշնամությունն իր հանդեպ Գնելի

սպանության համար: Պատմագիտության մեջ Պապի՝ որպես Արշակի ու Փառանձեմի որդին լինելու հանգամանքը մինչև այժմ որոշ տարակարծությունների տեղիք է տալիս: Մ. Օրմանյանը ենթադրաբար Պապին համարում է ո՛չ թե Փառանձեմի, այլ Օլիմպիայի որդի՝ ծնված 351 թ. (Օրմանեան, 1909, 241-245): Յ. Մարկվարտը ենթադրում է, որ Արշակ Բ-ն ամուսնացել էր Փառանձեմի հետ, որովհետև իր Օլիմպիա կնոջից զավակ չուներ, և շարունակում է, որ Պապը ծնվել է 360 թ. և թագավոր է կարգվել 10 տարեկան հասակում և սպանվել է 14 տարեկան հասակում (Markwart, 1932, 95): Հ. Մանանդյանը ենթադրում է, որ Պապը, լինելով Փառանձեմի ու Գնելի որդին, Արշակ Բ-ի ո՛չ թե հարազատ, այլ խորթ զավակն էր (Մանանդյան, 1978, 202): Այդուհանդերձ, կարծում ենք, որ այս ենթադրություններն այնքան էլ ընդունելի չեն: Պապի՝ որպես հռոմեացի մոր զավակ կամ Փառանձեմի ու Գնելի որդի իրողության մասին ոչինչ չեն հաղորդում ո՛չ Ամիանոսը, ո՛չ էլ հայ պատմիչները: Հակառակը՝ Փավստոս Բուզանդի ու Մովսես Խորենացու տեղեկությունները հստակորեն մատնանշում են, որ Պապն Արշակի ու Փառանձեմի որդին էր: Ինչպես վկայում է Փավստոս Բուզանդը, «բայց ծնաւ ապա Փառանձեմ թագաւորին ուստր մի, և կոչեցին զանուն նորա Պապ, և սնուցին զնա, և ՝ի չափ հասուցին» (Փավստոս Բուզանդ, 1987, 192): Ըստ Մովսես Խորենացու՝ «յաւել առնուլ զկին նորին զՓառանձեմ, յորմէ եղև պատանի մի, որ անուանեցաւ Պապ» (Մովսես Խորենացի, 1981, 344):

Գնելի սպանության և Փառանձեմի հետ ամուսնանալու հարցում Փավստոս Բուզանդն ու Մովսես Խորենացին ընդհանուր առմամբ գրեթե միանման տեղեկություններ են հաղորդում: Սակայն վերջինիս երկում կան ուշագրավ տվյալներ: Չնայած Փավստոս Բուզանդի հաղորդածին՝ Տիրիթը, ըստ Մովսես Խորենացու, Գնելից անմիջապես հետո չսպանվեց: Արշակ Բ-ն չշտապեց Տիրիթին մահապատժի ենթարկել, անգամ այն բանից հետո, երբ Շապուհ Բ-ն, հյուսիսային ազգերի դեմ պատերազմները վերջացնելով, հայտնեց իր զայրույթն Արշակին, թե նա այդքան տարիներ հարկ է տալիս կայսրին, բայց ոչ իրեն, նա Տիրիթին ու Վարդան Մամիկոնյանին հաշտության խնդրանքով, թագավորավայել ընծաներով ուղարկեց պարսից արքայի մոտ: Շապուհը, որոշած լինելով հարձակվել հռոմեացիների վրա, Արշակին խնդրեց արշավանքին մասնակցել հայոց բոլոր զորքերով, սակայն վերջինս ընդամենը մի փոքր զորամաս ուղարկեց: Արշակը, բանակցությունների անհաջող ելքի համար զայրանալով Տիրիթի վրա, զրկեց պատվից, քանի որ վերջինս «յաղագս ատելութեանն զոր ունէր առ Յոյնս» (Մովսես Խորենացի, 1981, 344): Տիրիթը, չկարողանալով հանդուրժել նման անպատվությունը և վախենալով թագավորի հետագա քայլերից, փորձեց ապավինել Շապուհ Բ-ին: Սակայն թագավորի հրամանով Վասակ սպարապետը հետապնդեց նրան և սպանեց (Մովսես Խորենացի, 1981, 346): Բ. Հարությունյանը նշում է, որ չի բացառվում, որ հեռահար նպատակներ հետապնդող և թագավոր դառնալու ակնկալիքներ ունեցող Տիրիթն ապագայում պարսիկների աջակցությունը ստանալու սպասելիքով բանակցությունների ժամանակ գիտակցաբար նրանց զիջումներ է կատարել, ինչն Արշակը չէր կարող չնկատել (Հայոց պատմություն, ԳԱԱ հրատ., հ. Բ, գք. Ա, էջ 84): Գնելի ու Տիրիթի հետ կապված իրադարձությունների պատմահամեմատական վերլուծությունը հիմք է տալիս ենթադրելու, որ մենք գործ ունեինք Մեծ Հայքի Արշակունյաց թագավորության գահին տիրելու անհաշտ պայքարի հետ: Ցավոք, այդ պայքարը պարունակում էր նաև արտաքին գործոններ՝ ի դեմս Հռոմի ու

Պարսկաստանի, որոնք ունեին հեռահար նպատակներ և ցանկանում էին Մեծ Հայքի գահին տեսնել իրենցից կախման մեջ գտնվող թագավորի: Սակայն ի դեմս Արշակ Բ-ի՝ մենք գործ ունենք ճկուն ներքին քաղաքականություն իրականացնող գահակալի հետ: Հայոց թագավորը Գնելի ու Տիրիթի սպանությամբ հեռացրեց գահին տիրելու վտանգները՝ ժամանակավորապես թուլացնելով ներքաղաքական պայքարի սրումը երկրի ներսում:

Գնելի և Տիրիթի սպանությունից որոշ ժամանակ անց իրադրությունն արքունիքում կրկին սրվեց՝ պայմանավորված Արշակ Բ-ի երկրորդ ամուսնությամբ: Այս մասին մեզ տեղեկություններ են հաղորդում դեպքերին ժամանակակից պատմագիր Ամմիանոս Մարկելինոսը, Փավստոս Բուզանդը: Ըստ Ամմիանոսի վկայության՝ Հռոմում իր գործերը կարգավորելուց հետո Կոստանդիոս Բ-ը (337-361), բանակի գլուխ անցած, ժամանում է Կապադովկիայի Կեսարիա քաղաք: Հայոց թագավոր Արշակը կայսրից իր մոտ՝ Կեսարիա գալու հրավեր է ստանում: Նրանց տեսակցությամբ ավելի ամրապնդվեց հայ-հռոմեական բարեկամությունն ու ռազմական համագործակցությունը: Բացի տարբեր ընծաներից ու շնորհումներից՝ Կոստանդիոսն Արշակին կնության տվեց իր մահացած եղբոր՝ Կոստասի նախկին նշանածին՝ Օլիմպիային (Аммиан Марцеллин, 2005, XX, 11): Դատելով Փավստոս Բուզանդի հաղորդած տեղեկություններից՝ Փառանձեմ թագուհին քանիցս փորձել է նրան թունավորել, սակայն հաջողության չի հասել: Ի վերջո, նրան հաջողվեց արքունական պալատի երեց Մրջյունիկի միջոցով թունավորել Օլիմպիային: Դրա դիմաց Մրջյունիկը որպես վարձ ստացավ Տարոն գավառի արքունական Գոմկունք գյուղը, որն իր ծննդավայրն էր (Փավստոս Բուզանդ, 1987, 192-194): Կարծում ենք, որ Արշակ Բ-ն, Օլիմպիային կնության առնելով, նախևառաջ դիվանագիտական քայլ կատարեց հայ-հռոմեական դաշինքն ամրապնդելու ուղղությամբ: Սակայն այդ քայլը հայոց ներքաղաքական կյանքում առաջացրեց լուրջ խմորումներ, որոնք մեծապես ազդեցին պետության արտաքին քաղաքականության վրա: Օլիմպիայի սպանության հետ կապված՝ կարող ենք ենթադրել, որ 1) այդ սպանության մեջ իրենց մեղքի բաժինն են ունեցել երկրի պարսկամետ ուժերը՝ փորձելով կանխել հայ-հռոմեական հնարավոր դաշնակցությունը հռոմեա-պարսկական հակամարտության համատեքստում, 2) այդ դավադրությունը կազմակերպել է Անդովկ Սյունին, քանի որ Փառանձեմի «տիկնանց տիկին» լինելու հանգամանքն ուներ քաղաքական մեծ նշանակություն Սյունիների նախարարական տան համար: Պատմագիտության մեջ այսօր էլ վիճելի է, թե երբ է Արշակ Բ-ն ամուսնացել Օլիմպիայի հետ: Յ. Մարկվարտը ենթադրում է, որ այդ ամուսնությունը տեղի է ունեցել 357 թ. (Markwart, 1932, 232-233), իսկ Հ. Մանանդյանը ենթադրաբար այդ իրադարձությունը դնում է 353 և 357 թվականների միջև (Մանանդյան, 1978, 164): Լեոն նշում է, որ ամուսնությունը տեղի է ունեցել 360 թ. (Լեո, 1966, 461): Արշակի ու Օլիմպիայի ամուսնության թվականի ճշգրտման համար առաջնային սկզբնաղբյուրներ են Մովսես Խորենացու ու Փավստոս Բուզանդի աշխատությունները: Ցավոք սրտի, նրանք որևէ ժամանակագրական տեղեկություն չեն հաղորդում այդ իրադարձության վերաբերյալ, ինչը բացասաբար է անդրադառնում խնդրի վերջնական լուծման համար, քանի որ նրանք ժամանակաշրջանին մոտ ապրած պատմիչներ են, և նրանց տեղեկությունները կարող էին հույժ կարևոր ու ճշգրիտ լինել: Վերոնշյալ իրադարձության թվականի ճշգրտման համար առաջնային սկզբնաղբյուր է նաև դեպքերին ժամանակակից պատմագիր Ամմիանոս Մարկելինոսի աշխատությունը, և նրա հաղորդած

տեղեկությունները կարող են նպաստել խնդրի լուծմանը: Այդ տեղեկությունների քննությունը ցույց է տալիս, որ հռոմեական կայսր Կոստանդիոս Բ-ն Կապադովկիայի Կեսարիա քաղաք է ժամանել առնվազն 360 թ.: Կեսարիայում հայոց թագավորի հետ տեսակցության ժամանակ էլ կայսրն Օլիմպիային կնության է տալիս Արշակ Բ-ին (Аммиан Марцеллин, 2005, XX, 11): Հետևաբար կարծում ենք, որ ավելի հավանական է հետազոտողների մի մասի այն տեսակետը, համաձայն որի՝ հայոց թագավոր Արշակ Բ-ն Օլիմպիային կնության է առել 360 թ.:

Արշակավանի կառուցումը և դրա հետևանքները: Հայոց թագավորն ամրապնդեց իր դիրքերը արքունիքում: Ներքին քաղաքականության ասպարեզում Արշակ Բ-ն հաջորդ կարևոր քայլը կատարեց թագավորական իշխանության ուժեղացման ու կենտրոնաձիգ պետության ամրապնդման ասպարեզում. խոսքը նախարարական տների տնտեսական ու ռազմական դիրքերի թուլացմանն ուղղված քաղաքականությունն էր: Պատմագիտության մեջ այսօր էլ վիճելի է, թե երբ Արշակը կարգադրեց քաղաք կառուցել Մասիսի հարավային ստորոտում՝ Կոգովիտ գավառում: Ինչպես գրում է, Փավստոս Բուզանդը, «զայնու ժամանակաւ շինեաց իւր արքայն դաստակերտ մի ի հովիտն անուանեալ ի Կոգ գաւառի: Եւ ետ հրաման ընդ ամենայն գաւառս իշխանութեան իւրոյ, և հրամայեաց կարգել քարոզ ընդ ամենայն տեղիս աշխարհացն հրապարակին իւրոյ. և ամենայն կողմանս գաւառաց իւրոյ լի առնէր հրամանաւն արքունի, զի եթէ ոք ումեք ինչ պարտիցի, եթէ ոք ոլրուք ուստեք ինչ վնասեալ իցէ, կամ ոք ումեք ինչ դատ պարտիցի, ամենեքեան եկեսցեն ի դաստակերտն շինեսցին: Եթէ արիւնահան ոք իցէ, կամ վնաս ուրուք ումեք արարեալ իցէ, կամ զկին ուրուք տարեալ իցէ, կամ պարտապան իցէ, կամ ոք ղուրուք կարասի ունիցէ, կամ ոք յումեքէ երկիւղած ինչ իցէ, և եկեսցէ յայն տեղի, դատ և իրաւունք մի լիցին: Իսկ եթէ ոք ումեք ինչ պարտիցի և որում պարտիցին, եկեալ յայն տեղին՝ առանց դատի և իրաւանց կալցին և ի դուրս տարցին» (Փավստոս Բուզանդ, 1987, 168): Ըստ պատմիչի՝ արքունի հրամանը դուրս գալուն պես ապաստան փնտրելով՝ Կոգովիտում հավաքվեցին բոլոր անբարո տարրերը: Այնտեղ էին հաստատվում նաև իրենց տերերի գանձերը հափշտակած ծառաները, ավանդառուները՝ իրենց պահ տրված ավանդներով, ինչի հետևանքով երկիրը խիստ տուժում էր: Թեպետ բողոքներ շատ եղան, սակայն արքունիքը դժգոհողներին չպաշտպանեց և իր գործը շարունակեց (Փավստոս Բուզանդ, 1987, 168): Փավստոս Բուզանդի խոսքերով. «առ հասարակ ամենեցուն ասելով՝ թե իրաւունք մեռան, և վասն այսորիկ ոչ գտանէին. այլ թէ էր, և կորուսեալ էին, ուր և էր ջանայաք խնդրէաք գտանէաք» (Փավստոս Բուզանդ, 1987, 168): Ա. Գարագաշյանի կարծիքով թագավորի հրամանը մի ակնարկ է, որ հին Հայաստանում ևս գոյություն է ունեցել ապաստանի իրավունքը (Գարագաշեան, 1895, 11-12): Լեոն ու Մարկվարտը ենթադրում են, որ Արշակավան էին փախել, հավանորեն ոչ միայն հանցապարտները, այլև, գլխավորապես, ճորտ գյուղացիները, «շինականները», որոնց այնտեղ տրվել էին որոշ արտոնություններ (Լեո, հ. Ա, 1966, 462-463, Markwart, 1930, 62): Կարծում ենք, հասկանալի է, որ հարկ հիմնականում տալիս էին գյուղացիները, որոնք տնտեսապես կախյալ էին և մեծ սիրով կարձագանքեին այս հրամանին: Կարող ենք ենթադրել, որ Արշակավանում կարող էին լինել եկեղեցու և նախարարության տրամադրության տակ եղած կալվածքներից փախած անձանց երեխաները:

Շուտով հավաքատեղին դարձավ ավան, այնուհետև՝ քաղաք, և ընդարձակվելով այն զբաղեցրեց հովիտը: Թագավորը քաղաքն իր անունով կոչեց Արշակավան: Թագավորի ձեռնարկը ոչ միայն մեծ դժգոհություն ու բողոք ծնեց երկրի մեծամեծերի ու ավագանու շրջանում, այլև հանդիպեց եկեղեցու դիմադրությանը: Արշակին այդ ձեռնարկից շատ էր փորձում հետ պահել հատկապես Խադ եպիսկոպոսը, որը, հակառակ թագավորի հրամանի, չեկավ Արշակավանի եկեղեցում սեղանի կանգնեցմանը: Դատելով Փավստոս Բուզանդի խոսքերից՝ Արշակը, գանձեր և թանկագին նժույգներ նվիրելով, փորձեց կաշառել նրան, սակայն ոչնչի չհասավ: Ավելին, եթե հավատանք պատմիչին, նա Արշակից ստացածը բաժանում էր աղքատներին և շարունակում հանդիմանել նրան, մինչև որ հեռացվեց բանակից (Փավստոս Բուզանդ, 1987, 170):

Դատելով Փավստոս Բուզանդի վերոնշյալ հաղորդումներից՝ ըստ երևույթին, Արշակ Բ-ն թույլ էր տվել, որ ավատատիրական ճնշումներից դժգոհ տարրերը հաստատվեն Արշակավանում: Այս քայլով հայոց թագավորը ցանկանում էր ուժեղացնել կենտրոնական իշխանությունը և թուլացնել տնտեսապես ու ռազմական առումով հզորացած նախարարական դասին: Իսկ վերջիններս վարկաբեկում էին թագավորին, թե նա Արշակավանում հավաքել է բոլոր անբարո ու քրեածին տարրերին: Բ. Հարությունյանը նշում է, որ դժվար չէ կռահել, որ հայոց թագավորությունում գործում էր շինականի իրավունքը՝ հեռանալու տիրոջից: Նախարարություններն էլ, համարելով, որ իրենց իրավունքները խախտվել են, կարծում էին, թե իրավասու են պատժելու Արշակավան փախած հպատակներին (Հայոց պատմություն, ԳԱԱ հրատ., հ. Բ, գք. Ա, 2018, 87): Այնուհետև դժգոհ նախարարները, հարձակվելով քաղաքի վրա, ոչնչացրին նրա բնակչությանը՝ բացառությամբ ծծկեր երեխաների. «Եւ նախարարացն Հայոց ժողովեալ՝ դիմեցին ի վերայ արքունական ձեռակերտին Արշակաւանի և հարին զնա սրով սուսերի յառնէ մինչև ցկին, բայց ի տղայոց ստնդիացաց՝ քանզի դառնացեալք էին իւրաքանչիւր ի վերայ ծառայից իւրեանց և յանցաւորաց» (Մովսես Խորենացի, 1981, 348-350): Փավստոս Բուզանդը հայտնում է, թե իբր քաղաքի արդեն քսան հազար տուն կազմող բնակչությունը երեք օրվա ընթացքում ժանտախտի զոհ է դարձել, որը Ներսես կաթողիկոսի անեծքի հետևանքն էր (Փավստոս Բուզանդ, 1987, 176): Յ. Մարկվարտը ենթադրաբար Արշակավանի կործանումը կապել է Փոքր Ասիայում ու Պոնտոսում 358 թ. օգոստոսի 24-ին տեղի ունեցած ավերիչ երկրաշարժի հետ (Markwart, 1932, 226-233): Կարծում ենք, որ Մարկվարտի այս ենթադրությունը այնքան էլ ճիշտ չէ: Փավստոս Բուզանդը ոչինչ չի հայտնում երկրաշարժի մասին, իսկ Մովսես Խորենացին հստակ փաստում է նախարարների կողմից Արշակավանի ավերումը՝ կրկին չարձանագրելով որևէ երկրաշարժ:

Ավատատիրական հարաբերությունների մաս կազմող եկեղեցին, ի դեմս կաթողիկոսի, փորձեց թագավորին հետ պահել իր ձեռնարկից՝ առաջարկելով Արշակավանը քանդել, իսկ հավաքված ժողովրդին ցրել, սակայն թագավորը չանսաց նրան (Փավստոս Բուզանդ, 1987, 174): Այս իրադարձություններին առնչվող հետաքրքիր հաղորդում ունենք Մովսես Խորենացու մոտ, ըստ որի՝ Արշակավանի կործանման մեջ հնարավոր է եղած լինի պարսից արքունիքի մասնակցություն: Մեծ Հայքում տեղի ունեցող իրադարձություններին ուշադիր հետևող Շապուհ Բ-ն, տեսնելով հայոց թագավորի ու նախարարների հարաբերությունների լարված բնույթը, կայսրություն կատարած հերթական արշավանքից հետո իր

զորավարներից մեկին հայկական գնդով ուղարկում է Մեծ Հայք, որ ձերբակալեն Արշակին: Վերջինիս հաջողվեց անցնել Վիրք՝ իր ենթակա Միրիանի (Մերիբանես) թագավորություն (Մովսես Խորենացի, 1981, 348): Եթե ենթադրենք, որ Խորենացու այս հաղորդումը ճիշտ է, ապա կարող ենք ամրագրել, որ Արշակավանի դեպքերի հետ կապված՝ որոշ նախարարական տներ հարել են Շապուհ Բ-ին և նույնիսկ խնդրել նրա օգնությունը: Հետևաբար Արշակավանի կործանման մեջ իր դերն է ունեցել նաև պարսկական ռազմական ուժի ներկայությունը Մեծ Հայքում:

Մովսես Խորենացին նշում է, որ Ներսես Մեծը չկարողացավ կործանումից առաջ գնալ Արշակավան և այնտեղ հասավ վերջում: Վերջինս, տեսնելով, որ սպանվածների մանուկ տղաներին՝ որպես թշնամիների զավակների, կամենում էին գերի տանել, հրամայեց ազատել և քթոցներով տանել մի գոմ ու նրանց սնուցիչներ ու սնունդ նշանակեց: Երեխաները մեծանալուց հետո ավան հիմնեցին, որը կոչվեց Որթք, այսինքն՝ Քթոցներ (Մովսես Խորենացի, 1981, 350): Իրականում, կարծում ենք, որ հայոց կաթողիկոսը առնվազն տեղյակ է եղել դավադրությանը:

Հայոց թագավորը, Արշակավանի դեպքերից անմիջապես հետո վրաց թագավորից օգնական ուժեր վերցնելով և դրանց գումարելով իր ձեռքի տակ եղած ուժերը, շարժվեց քաղաքն ավերած նախարարների դեմ: Սակայն վերջիններս էլ Կամսարի որդի Ներսեհ Կամսարականի առաջնորդությամբ միավորվեցին և պատերազմ սկսեցին թագավորի դեմ: Թե՛ նախարարության, թե՛ թագավորի զորքերը մեծ կորուստներ կրեցին, սակայն կողմերից ոչ մեկը չհաղթեց (Մովսես Խորենացի, 1981, 352): Այնուհետև, Արշակը կաթողիկոսից խնդրեց միջնորդել՝ հաշտվելու նախարարների հետ: Երկրի ծանր վիճակը ստիպեց, որ նույն խնդրանքով կաթողիկոսին դիմեն նաև նախարարներն ու հոգևորականությունը: Ի վերջո Ներսեսի շնորհիվ նախարարներն ու թագավորը հաշտվեցին: Միայն Արծրունյաց նահապետ Մերուժանն ու նրա քրոջ ամուսին Վահան Մամիկոնյանը, չհամերաշխելով թագավորի հետ, բացեիբաց անցան Շապուհ Բ-ի կողմը: Ինչ վերաբերում է մյուս նախարարներին, ապա նրանք «հաստատեցին ուխտ, զի յայնմ հետէ թագաւորն վարեսցի ուղղութեամբ, և նոքա ծառայեսցեն միամտութեամբ և այս ի մէջ նոցա» (Մովսես Խորենացի, 1981, 352):

Բ. Հարությունյանի կարծիքով Արշակավանի ավերումը և բնակչության ջարդը պետք է թվագրել ամենաուշը 355-ով (Հայոց պատմություն, ԳԱԱ հրատ., հ. Բ, գք. Ա, 2018, 88):

Յ. Մարկվարտի կարծիքով Արշակավանը հավանաբար կործանվել է 358 թ. օգոստոսի 24-ին Փոքր Ասիայում և Պոնտոսում տեղի ունեցած երկրաշարժի հետևանքով, որը մեծ ավերածություններ էր արել բազմաթիվ քաղաքներում (Markwart, 1932, 226-233): Հ. Աստուրյանն ու Ե. Մուրադյանը նշում են, որ Արշակավանի կառուցման գլխավոր պատճառը նախարարական տների հզորությունն էր: Վերջիններս գրեթե այնքան հզոր էին, որքան՝ թագավորը: Այս հանգամանքը ստիպեց Արշակին կառուցել քաղաք, այդ քաղաքի բնակիչներից իրեն հավատարիմ գնդեր պատրաստել՝ թուլացնելու համար նախարարների հզորությունը (Աստուրեան, 1912, 296, Մուրատեան, 1900, 47): Ս. Պալասանյանը նշում է, որ Արշակավանի կառուցումը պատճառ հանդիսացավ թագավորի և նախարարների միջև թշնամության առաջացման համար (Պալասանեան, 1902, 182): Ամփոփելով Արշակավանի հետ կապված իրադարձությունները՝ կարող ենք ամրագրել, որ Արշակ Բ-ն քաղաքը

կառուցեց բավական բարդ արտաքին ու ներքին քաղաքական զարգացումների պայմաններում: Ավատատիրական հարաբերությունների զարգացմամբ պայմանավորված՝ Մեծ Հայքի թագավորության ներսում ուժեղացել էին կենտրոնախույս ձգտումները (Մանանդյան, 1934, 271-273): Խոսրով Կոտակից և Տիրանից սկսած՝ Արշակունի թագավորները պայքար էին մղում հանուն կենտրոնաձիգ պետության պահպանման, բայց այդ պայքարը մասնակիորեն էր հաջողություն բերում, ինչն ազդում էր նաև արտաքին հաղթանակների արդյունավետության նվազման վրա, քանի որ ներքին ուժերը հաճախ անմիաբան էին: Այս համատեքստում, ավատատիրական հարաբերությունների զարգացմամբ պայմանավորված, ուժեղանում էին տարանջատ ձգտումները, հզոր նախարարական տները, այդ թվում՝ խոշոր ավատատեր դարձած եկեղեցին, չէին ցանկանում հնազանդվել Արշակ Բ-ին: Այս քայլով հայոց թագավորը թուլացնում էր նախարարներին՝ զրկելով նրանց տնտեսական ու քաղաքական հզորությունից, բնականաբար, թուլանում էր նաև եկեղեցին:

Հարաբերությունները աշխարհիկ և հոգևոր վերնախավի հետ: Սակայն Արշակավանի դեպքերից շատ ժամանակ չանցած՝ Արշակ Բ-ն հարձակման անցավ նախարարների դեմ՝ ի չիք դարձնելով կայացած համաձայնությունը: Առաջիններից մեկը պատժվեց Կամսարականների ընտանիքը: Թագավորը նրանց խաբեությամբ հրավիրեց Արմավիրի իր լքված պալատ՝ իբրև թե պատվելու ու մեծարելու, սակայն հրամայեց կոտորել տղամարդկանց, կանանց ու երեխաներին: Նրանց տիրույթները, այդ թվում՝ Արտագերս ամրոցն ու նախարարության ոստան Երվանդաշատ քաղաքը, հարքունիս գրավվեցին:

Արշավիրի որդի Սպանդարատը, Արշակունյաց տոհմից կին վերցնելով, գնացել ու բնակվել էր նրա ժառանգական տիրույթներում՝ Տարոնի ու Հաշտյանքի կողմերում: Դրա շնորհիվ Սպանդարատը փրկվեց, իսկ Կամսարական տոհմի կոտորածի լուրը հասնելուն պես իր Շավարշ ու Գազավոն որդիների հետ ընտանիքով հեռացավ կայսրություն (Մովսես Խորենացի, 1981, 356): Ցավոք, Մովսես Խորենացին չի հայտնում, թե էլ ինչ նախարարություններ զոհ գնացին Արշակի վրեժխնդրությանը: Ներսեսը, որի միջնորդական դերն այդպիսի տխուր ընթացք էր ստացել, հեռացավ թագավորից: Որքան էլ որ նախարարներին պատժելու գործընթացը կոպիտ քայլեր էր թագավորի կողմից, Արշակ Բ-ն, այնուամենայնիվ, փորձում էր վճռականորեն արմատախիլ անել կենտրոնախույս դրսևորումները երկրում:

Դեպքերի նման զարգացումը հնարավորություն տվեց արքունիքում կարևոր դեր խաղալու Հայր մարդպետին: Բ. Հարությունյանը նշում է, որ չնայած հայագիտության մեջ լայն տարածում ստացած տեսակետին՝ Մեծ Հայքում մարդպետական նախարարական տոհմ չի եղել, քանի որ մարդպետական գործակալությունը հանձնվում էր ներքինացված անձանց (Հայոց պատմություն, ԳԱԱ հրատ., հ. Բ, գք. Ա, 2018, 90): Մովսես Խորենացին նշում է, որ Վաղարշակի հրամանով հին թագավորների սերնդից ներքինիներ են խզվում, որոնց նահապետ է նշանակում Հայրին, որի իշխանությունը տարածվում էր Ատրպատականից մինչև Ճուաշ ու Նախճավան (Մովսես Խորենացի, 1981, 126): Հայր մարդպետն առաջնորդում էր երկրի ներքին կարգ ու կանոնն ապահովող մարդպետական գունդը, նվիրված էր թագավորին և հանդես էր գալիս որպես թագավորական իշխանության ուժեղացման ջատագով: Նրա գործունեությունը դատափետվել է հայ պատմիչների երկերում: Հայր

մարդպետների գործունեությունը ոչ միայն նպատակ ուներ թուլացնելու երկրի մեծամեծ նախարարություններին, այլև մեծապես ուղղված էր ավատատիրական հաստատության վերածված եկեղեցու ու կաթողիկոսի դեմ (Հայոց պատմություն, ԳԱԱ հրատ., հ. Բ, գք. Ա, 2018, 90)։ Հ. Մանանդյանը նշում է, որ Մեծ Հայքի Արշակունյաց թագավորության դարաշրջանում մարդպետները պայքար էին մղում կաթողիկոսական իշխանության ու եկեղեցական կալվածատիրության դեմ (Մանանդյան, 1978, 168)։

Փավստոս Բուզանդի հաղորդմամբ Արշակ Բ-ի օրոք Հայր մարդպետ էր այն նույն անձնավորությունը, որը մարդպետական գործակալությունը վարել էր նաև Տիրանի օրոք։ Պատմիչը նրան բնութագրում է որպես չարամիտ և ավելի անօրեն ու անիրավ, քան նրան նախորդած մարդպետները։ Բուզանդը հայտնում է, որ Արշակի թագավորության շրջանում նա ավելի շատ չարիքներ էր գործում, քան միչն այդ (Փավստոս Բուզանդ, 1987, 178)։ Արքունական տիրույթների նկատմամբ ունենալով վերահսկողական գործառույթի իրավունք, որոնք պատմիչը համարում է նրանը, Հայր մարդպետն այցի է գալիս Տարոն գավառ։ Ներսես կաթողիկոսը երկրի խոշոր ավատատերերից էր և իր ենթակայության տակ «զի հնգետասան գաւառ զայն ձեռական իշխանութեան ունէին իբրև սեպհական ՝ի բնմէ, առանձին առոշոգի նոցա էր կարգեալ», որոնք ցրված էին երկրով մեկ՝ Այրարատը, Դարանաղը, Եկեղյացը, Տարոնը, Բզնունիքը, Ծոփքը և նրանց միջև ու շուրջը գտնվող մի քանի այլ գավառներ (Փավստոս Բուզանդ, 1987, 178-180)։ Այցի գալով արքունի իր տեսչության տակ գտնվող տիրույթներ՝ Հայր մարդպետը որոշեց գնալ Աշտիշատ՝ աղոթելու ու կաթողիկոս Ներսեսի ողջույնը ստանալու։ Մինչ հյուրասիրությունը Հայր մարդպետը ճեմում էր կաթողիկոսի պալատից մինչև սրբերի վկայարաններ ընկած հրապարակում, տեսնում այդ վայրերի գեղեցկությունն ու շքեղ դիրքը և կաթողիկոսական ձեռական հողերի հարստությունը։ Փավստոս Բուզանդի հաղորդմամբ նա լցվեց նախանձով և ճաշելիս սկսեց մեղադրել Տրդատ Գ թագավորին, որ այդ վայրերը տվել է հոգևորականներին և ոչ թե աշխարհիկ տղամարդկանց։ Նա հայտարարեց. «Աստ պարտ է շինել զապարանս արքունի։ Եւ թէ ես Հայր մարդպետ կենդանի իցեմ և առ թագաւորաւն հասից, ասէ, որ ինչ աստ իցէ, զայն ի բաց փոխեցից. և որ աստ իցեն, ասէ, զնոսա հանից և զտեղիս՝ արքունի սենեակ կազմեցից» (Փավստոս Բուզանդ, 1987, 180)։ Նրա սպառնալից խոսքերին կաթողիկոսը պատասխանեց. «որք ժլատեալք ի նորա նուէրսն բերեն աչս, և այնմ ցանկան, վասն այսորիկ նա մի հասցէ առ այն՝ որով սպառնացաւն, այլ խափան լիցի իւր յառաջն նմա բազում մակարդ մեղացն իւրոց գործելոց» (Փավստոս Բուզանդ, 1987, 180)։ Եվ երբ Հայր մարդպետն իջնում է Եփրատի խիտ անտառով ծածկված ափ՝ երկու գետերի միախառնման մոտ, որտեղ ժամանակին հայոց Սանատրուկ թագավորը Մծուրք կոչվող քաղաքն էր կառուցել, նրան մոտեցավ Արծրունյաց տոհմի շառավիղ Շավասպը, որն Արծրունիների ու Ռշտունիների բնաջնջման ժամանակ փրկվել էր, և դավադրաբար սպանեց Հայր մարդպետին (Փավստոս Բուզանդ, 1987, 182)։ Դատելով Փավստոս Բուզանդի այս անչափ կարևոր հաղորդումներից՝ կարող ենք արձանագրել, որ Արշակ Բ-ի գահակալության շրջանի ներքին քաղաքականության ակնառու կողմերից մեկն էլ եկեղեցապատկան հողերի կրճատումն էր՝ ի հաշիվ արքունիքի։ Պատմիչներն այս մասին մանրամասն տեղեկություններ չեն հաղորդում, սակայն կարող ենք ենթադրել, որ այդ քաղաքականությունը դեռևս սկսվել էր Արշակ Բ-ի օրոք։ Այս համատեքստում հայոց թագավորը հասկանում էր, որ կենտրոնաձիգ

պետություն ստեղծելու ճանապարհին իրեն կարող էր հակադրվել անգամ ամբակուռ կառույց հիշեցնող եկեղեցին իր աստիճանակարգությամբ հանդերձ, և Արշակ Բ-ն քայլեր ձեռնարկեց այդ հակադրությունը զոնե նվազեցնելու համար: Ցավոք, այդ քաղաքականության զոհը դարձավ Հայր մարդպետը: Հ. Արմենն իրավամբ նշում է. «Ներսեսն ամուր կազմակերպությամբ օժտեց եկեղեցին, և կաթողիկոսը արքունիքի մեծամեծերեն մին դարձուց: Հոգևորական իշխանը միաժամանակ աշխարհական իշխան ալ եղավ: Ներսեսի օրով հայ եկեղեցին ամենախոշոր հողատերը կըլլար Հայաստանում» (Հրանտ Արմեն, 1967, 62):

Փավստոս Բուզանդը նրա սպանությունը որակեց աստծո վրեժ. «Եւ առն աստուծոյ ասացեալքն հուպ ընդ հուպ վաղվաղակի կատարեցաւ. զի ամենևին բան ’ի գետին ոչ անկանէր առն աստուծոյ» (Փավստոս Բուզանդ, 1987, 182), սակայն գրեթե ակնհայտ էր, որ դա ընդամենը Ներսես կաթողիկոսի վրեժխնդրության արդյունքն էր Հայր մարդպետի կողմից իրեն հանդիմանելու ու եկեղեցու կենսական շահերին դիպչելու համար:

Արշակ Բ-ն, որը Հայր մարդպետին համարում էր իր ամենահավատարիմ ու վստահելի նախարարներից մեկը, անտարբերության չմատնեց նրա սպանությունը: Նա որոշեց Ներսեսին զրկել կաթողիկոսական աթոռից և կաթողիկոս դարձնել իր հավատարիմ հոգևորականներից Չունակ անունով մեկին. «ապա հրաման տայր թագաւորն՝ կոչել զամենայն եպիսկոպոսս Հայոց աշխարհին, զի եկեսցեն ձեռնադրեսցեն զՉոնակն ’ի կաթողիկոսութեան Հայոց: Եւ ոչ մի ոք ոչ հաւանեաց գալ. բայց միայն Աղձնեաց և Կորդուաց եպիսկոպոսք եկին, և զՉոնակն ձեռնադրեցին կաթողիկոսութիւն ըստ հրամանի թագաւորին» (Փավստոս Բուզանդ, 1987, 194): Չունակին «ընտրուկ ի ստրկաց արքունի» բնութագրելով հանդերձ՝ Փավստոսը նրան համարում է «այր զգօն» (Փավստոս Բուզանդ, 1987, 194): Այսինքն՝ սա ցույց է տալիս, որ Չունակն առաքինի հոգևորական էր: Սակայն նկատի ունենալով, որ Չունակի օրոք հոգևոր իշխանությունն ենթարկվել է արքունիքին, պատմիչը գրում է, թե նա «ոչ ինչ ունէր լեզու յանդիմանութեան կամ խրատու, այլ հաւանեալ էր թագաւորին զինչ և նա գործիցէ» (Փավստոս Բուզանդ, 1987, 194): Պատմիչի հաղորդած տեղեկությունները ցույց են տալիս, որ Արշակ Բ-ն անհետևանք չթողեց Հայր մարդպետի սպանությունը: Ներսեսին զրկելով կաթողիկոսությունից և իրեն հավատարիմ հոգևորական Չունակին դարձնելով կաթողիկոս՝ վերահսկողություն հաստատեց եկեղեցու նկատմամբ՝ հիմնական թիրախ ունենալով պետության հզորացումը, և բնական էր, որ նման քաղաքականության համատեքստում հոգևորականության մեծ մասը կարող էր դժգոհ մնալ Արշակ Բ-ից, քանի որ դա լուրջ հարված էր եկեղեցու կենսական շահերին: Եկեղեցու շահերը պաշտպանող պատմիչը խորը հիասթափությամբ կարող էր հաղորդել, որ Չունակը չէր հանդիմանում թագավորին, սակայն, եթե հիմնախնդրին մոտենանք քաղաքական տեսանկյունից, ապա հստակորեն կարող ենք արձանագրել, որ Արշակ Բ-ն վարում էր ճկուն ներքին քաղաքականություն՝ հիմք ընդունելով Մեծ Հայքի ներքաղաքական կյանքի միասնականության ամրապնդումը: Բացի այդ՝ կցանկանանք մեր ուշադրությունը հրավիրել մեկ անչափ կարևոր հանգամանքի վրա ևս. առաջին անգամ կաթողիկոսը ձեռնադրվելու համար չմեկնեց Կեսարիա, այլ ձեռնադրվեց Մեծ Հայքում: Այս գործընթացը ևս սկիզբ առավ Արշակ Բ-ի օրոք և պաշտոնապես իր հանգրվանը գտավ Պապի ներքին քաղաքականության մեջ: Կարծում ենք, որ սա հույժ կարևոր իրողություն է՝ արձանագրելու

համար, որ ի դեմս Արշակ Բ-ի՝ մենք գործ ունենք անկախ ներքին քաղաքականություն իրականացնող գահակալի հետ: Հ. Հարությունյանը նշում է, որ Արշակ Բ-ն օժտված էր պետական գործչին հատուկ մեծ ունակություններով, և նա իր վարած ներքին քաղաքականությամբ հետևում էր հորը՝ Տիրանին, այսինքն՝ ստեղծել էր կենտրոնացած ուժեղ պետություն (Հարությունյան, 1945, 103):

Եզրակացություն: Այսպիսով՝ իր ներքին քաղաքականությամբ Արշակ Բ-ն փորձ կատարեց միավորելու պետության մասնատված քաղաքական ուժերին և ամրապնդելու կենտրոնաձիգ իշխանությունը երկրում: Հստակ քայլերի շնորհիվ նրան հաջողվեց համախմբել արքունիքից հեռացած նախարարներին, հզորացնել բանակը, հանգուցալուծել գահի համար մղվող պայքարը, համառ պայքար մղել տնտեսապես հզորացած նախարարների և եկեղեցու դեմ՝ հիմնական թիրախ ունենալով կենտրոնացված պետության կառուցումն ու երկրի ներքին միասնականության վերականգնումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Աստուրեան Հ. (1912),** Քաղաքական վերաբերութիւններ ընդմէջ Հայաստանի եւ Հռովմայ 190 էն ն. Ք. մինչեւ 428 յ. Ք., Վենետիկ, հրատ. Ս. Ղազար, 391 էջ:
2. **Արմեն Հ. (1967),** Արշակունիք և լուսավորչյաններ, «Պատմաբանասիրական հանդես», N 1, 54-64 էջ:
3. **Գարագաշեան Ա. (1895),** Քննական պատմութիւն հայոց, ըստ նորագոյն պատմական, լեզուաբանական եւ բանասիրական տեղեկութեանց, մասն Գ, Թիֆլիս, հրատ. Մ. Դ. Ռօտինեանցի, 381 էջ:
4. **Լեո (1966),** Երկերի ժողովածու, հ. Ա, Ե., հրատ. «Հայաստան», 567 էջ:
5. Կանոնագիրք հայոց (1964), հ. Ա, աշխատասիրությամբ Վ. Հակոբյանի, Ե., հրատ. ՀՍՍՌ ԳԱ, 740 էջ:
6. Հայոց պատմություն (2018), ԳԱԱ, հ. Բ, Միջին դարեր (IV դ.-XVII դ. առաջին կես), գք. Ա (IV դ. սկիզբ - IX դ. կես), Ե., հրատ. «Զանգակ-97», 704 էջ:
7. **Հարությունյան Հ. (1945),** Հայաստանը Արշակունիների ժամանակ (1-429 թթ.), Ե., հրատ. Մանկավարժական ինստիտուտի, 155 էջ:
8. **Մանանդյան Հ. (1934),** Ֆեոդալիզմը հին Հայաստանում (Արշակունիների ու մարզպանության շրջան), Ե., հրատ. Մելքոնյան ֆոնդի, 337 էջ:
9. **Մանանդյան Հ. (1978),** Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Բ, մաս Ա, Ե., ՀՍԱՀ ԳԱ հրատ., 646 էջ:
10. **Մովսես Խորենացի (1981),** Պատմութիւն հայոց, բնագիրը և ներածութիւնը Մ. Աբեղեանի և Ս. Յարութիւնեանի, Ե., «Երևանի համալս.», 588 էջ:
11. **Մովսիսեան Յ. (1884),** Հայաստանեայցս առաքելական Ս. Եկեղեցւոյ պատմութիւն, Վաղարշապատ, հրատ. Սրբոյ կաթողիկէ Էջմիածնի, 381 էջ:
12. **Մուրատեան Ե. (1900),** Քննական պատմութիւն Արշակ Երկրորդի եւ անոր Պապ որդւոյն, Աղեքսանդրիա, հրատ. «Արաքս», 198 էջ:

13. **Պալասանեան Ս. (1902),** Պատմութիւն հայոց, սկզբից մինչեւ մեր օրերը, Թիֆլիս, հրատ. Տ. Մ. Ռօտինեանցի, 571 էջ:
14. **Պետրոսյան Ե. (1995),** Հայ եկեղեցու պատմություն, մասն Ա (սկզբից մինչև 1441 թ.), Էջմիածին, հրատ. Մայր աթոռ Ս. Էջմիածին, 188 էջ:
15. **Փավստոս Բուզանդ (1987),** Պատմութիւն հայոց, բնագիրը Ք. Պատկանեանի, Ե., «Երևանի համալս.», 456 էջ:
16. **Օրմանեան Մ. (1909),** Տրդատէ Արտաշէս ժամանակագրական դիտողութիւններ, «Հանդէս ամսօրեայ», թիւ 8, օգոստոս, 241-246 էջ:
17. **Аммиан Марцеллин (2005),** Римская История, перевод с латинского Ю. Кулаковского и А. Сонни, Москва, Издательство «АСТ», 631 с.
18. **Markwart J. (1930),** Südarmenien und die Tigrisquellen nach griechischen und arabischen Geographen, Studien zur armenischen Geschichte, IV, Wien, "Mechitharisten-Buchdruckerei", 125-628 s.
19. **Markwart J. (1932),** Die Entstehung der armenischen Bistümer: kritische Untersuchung der armenischen Überlieferung, Orientalia Christiana, Vol. XXVII, Septembri, Num. 80, Roma, 137-236 s.

REFERENCES

1. **Asdurjean H. (1912),** K‘aghak‘agan vjerajerut‘iwnnjer ĕntmēj Hayasdani yw Hrovmay 190 ēn n. K‘. minch‘yw 428 y. K‘., Vjenjedig, hrad. S. Ghazar, 391 ēj:
2. **Armjen H. (1967),** Arshakunik‘ ew lusavorch‘yannjer, «Patmabanasirakan handjes», N 1, 54-64 ēj:
3. **Karakashjean A. (1895),** K‘nnagan badmut‘iwn hayots‘, ĕsd norakoyn badmagan, ljezuapanagan yw panasiragan djeghjegut‘jeants‘, masn G, T‘i flis, hrad. M. T. Rōdinjeants‘i, 381 ēj:
4. **Ljeo (1966),** JErkjeri zh’oghovatsu, h. A, JE., hrat. «Hayastan», 567 ēj:
5. Kanonagirk‘ hayots‘ (1964), h. A, ashkhatasirut‘yamp V. Hakobyani, JE., hrat. HSSR GA, 740 ēj:
6. Hayots‘ patmut‘yun (2018), GAA, h. B, Mijin darjer (IV d.-XVII d. arajin kjes), gk‘. A (IV d. skizb - IX d. kjes), JE., hrat. «Zangak-97», 704 ēj:
7. **Harut‘yunyan H. (1945),** Hayastanĕ Arshakuninjeri zh’amanak (1-429 t‘t‘.), JE., hrat. Mankavarzh’akan instituti, 155 ēj:
8. **Manandyan H. (1934),** Fjeodalizmĕ hin Hayastanum (Arshakuninjeri u marzpanut‘yan shrjan), JE., hrat. Mjelk‘onyan fondi, 337 ēj:
9. **Manandyan H. (1978),** K‘nnakan tjesut‘yun hay zh’oghovrdi patmut‘yan, h. B, mas A, JE., HSAH GA hrat., 646 ēj:
10. **Movsjes Khorjenats‘i (1981),** Patmut‘iwn hayots‘, pnakirĕ ew njeratsut‘iwnĕ M. Abjeghjeani ew S. Harut‘iwnjeani, JE., «JErewani hamals.», 588 ēj:
11. **Movsisjean H. (1884),** Hayastanjeayts‘s arak‘jelagan S. JEgjeghjets‘woy batmut‘iwn, Vagharshabat, hrat. Srpoy kat‘oghigē Ējmiadzni, 381 ēj:

12. **Muradjean JE. (1900),** K‘nnagan badmut‘iwn Arshag JErgrorti yw anor Bab ordwoyn, Aghjek‘santria, hrad. «Arak‘s», 198 ēj:
13. **Balasanjean S. (1902),** Batmut‘iwn hayots‘, sgzpits‘ minch‘yw mjer ōrjerě, T‘i flis, hrat. T. M. Rōtinjeants‘i, 571 ēj:
14. **Pjedrosyan JE. (1995),** Hay jekjeghjets‘u patmut‘yun, masn A (skzbits‘ minch‘ew 1441 t‘.), JEjmiatsin, hrad. Mayr at‘or S. JEjmiatsin, 188 ēj:
15. **P‘avstos Buzand (1987),** Patmut‘iwn hayots‘, bnagirě K‘. Patkanjeani, JE., «JErewani hamals.», 456 ēj:
16. **Ōrmanjean M. (1909),** Drtadē Ardashēs zh’amanagakragan tidoghut‘iwnnjer, «Hantjes amsōrjeay», t‘iw 8, ōgosdos, 241-246 ēj:
17. **Ammian Mapcjellin (2005),** Pimckaja Ictopija, pjepjevod c latinckogo Ju. Kulakovckogo i A. Conni, Mockva, Izdatjel’ctvo «ACT», 631 c.
18. **Markwart J. (1930),** Südarmenien und die Tigrisquellen nach griechischen und arabischen Geographen, Studien zur armenischen Geschichte, IV, Wien, "Mechitharisten-Buchdruckerei", 125-628 s.
19. **Markwart J. (1932),** Die Entstehung der armenischen Bistümer: kritische Untersuchung der armenischen Überlieferung, Orientalia Christiana, Vol. XXVII, Septembri, Num. 80, Roma, 137-236 s.

Ներկայացվել է՝ 28.02.2022	Received 28.02.2022	Получено: 28.02.2022
Գրախոսվել է՝ 30.06.2022	Reviewed 30.06.2022	Рассмотрено: 30.06.2022
Ընդունվել է՝ 25.08.2022	Accepted 25.08.2022	Принято: 25.08.2022

E-mail: edovarshamyan@mail.ru